ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

**Ավարտական հետազոտական աշխատանք**

**Թեմա՝** Գ. Սունդուկյանի «Պեպո» թատերգության ուսուցումը

**Կատարող՝** Վեհանուշ Հեքիմյան
Ախուրյանի թիվ 2 հիմն. դպրոց,
հայոց լեզու և գրականություն

**Ղեկավար՝** Կարինե Զիլֆիմյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

## Բովանդակություն

Ներածություն…….... 2

Գաբրիել Սունդուկյանի կյանքը, ստեղծագործությունները …….…. . 4

Սունդուկյանի <<Իմ մահը և թաղումը>> կտակից …….… 4

Հեթանոսական թատրոնը հին Հայաստանում: Հելլենիստական թատրոն…… ……5

Հելլենիզմ: Հելլենիզմն Հայաստանում…….. 7

Գաբրիել Սունդուկյանը և թատրոնը…… 8

Թատերական երկերի ուսումնասիրումը……. 9

<<Պեպո>> կատակերգությունը: <<Պեպո>>-յի կերպարները: <<Պեպո>>-յի բարոյական դասերը …… 11

Ինչպես է ծնվել <<Պեպոյի երգը>>…… 14

Եզրակացություն…….. 15

Օգտագործված գրականության ցանկ……..… 17

## Ներածություն

Գաբրիել Սունդուկյանի գրական ժառանգության գնահատման և ուսումնասիրության հարցերով արվեստագետները ու գրականագետները սկսել են զբաղվել դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից:

Նախախորհրդային գրականության մեջ բարձր է գնահատվում Գ. Սունդուկյանի դերը՝ որպես հայ ռեալիստական թատրոնի հիմնադիր:

Գրական և թատերական շրջանները նրան համարում են մի աննախադեպ երևույթ, գեղարվեստական բացառիկ տաղանդ, որը մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն հայ թատերագրության վրա, այլ անմիջականորեն նպաստել մի կողմից վրաց ժողովրդի դրամատուրգական արվեստի վերընթացին, մյուս կողմից՝ ռուսական դասական թատրոնի լավագույն ավանդների ստեղծագործական յուրացմանը հայ իրականության մեջ:

Հետազոտական աշխատանքն ունի արդիական նշանակություն:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ստեղծագործությունում առկա գաղափարներով: Այն քարոզում է արդարություն, ճշմարտախոսություն, հոգատարություն, պատվախնդրություն, աշխատասիրություն: Նպաստում է սովորողի բարոյական վեհ հատկանիշների, արժեքների ձևավորմանը: Այս գործում մերժվում է սուտն ու մյուս ստորությունները, որոնք իսկապես ահռելի թափ են ստացել վերջին ժամանակներում:

Նպատակն է արժևորել սիրո, բարու, ազնվության, արդարամտության, աշխատանքի դերը ու ցույց տալ դաժանության, ստի, ուրիշի քրտինքը ուտելու վատ հետևանքները:

Որքան ավելի խոշոր է գրողը որպես անհատ, այնքան ավելի խորն ու համապարփակ է նրա կերպարը:

Իսկապես նշանակալից ստեղծագործական անհատականությունը հանդիսանում է հասարակական գիտակցության, երկրի հոգևոր զարգացման բարձր կազմակերպված և չափազանց նպատակաուղղված երևույթ, որը արտացոլում և բորբոքում է գաղափարներ ու ձգտումներ՝ ամբողջ սոցիալական խմբերի, ժողովրդական տարբեր շերտերի, ներկայացնում է ազգային կյանքը, մշակույթը այս կամ այն կողմով: Այս բոլոր հասարակական ուժերը ստեղծագործական անհատականության մեջ դրսևորվում են

անկրկնելի ինքնատիպությամբ, քանի որ այդ դրսևորումն իրականացվում է անհատի կենսական ու գեղարվեստական փորձի միջոցով:

Սունդուկյանի ստեղծագործական արվեստանոցի ուսումնասիրման ժամանակ սովորողը պետք է հետևի թատերագրի գեղարվեստական մտածողության ընթացքին, տեսնի այն օրինաչափություններն ու առանձնահատկությունները, որոնք պայմանավորել են հեղինակի ռեալիստական մեթոդը, պարզի, թե ինչ սկզբունքներով է ստեղծվել Սունդուկյանի կերպարների համակարգը, Սունդուկյանի գործերի (հատկապես <<Պեպո>>-յի) վերլուծությունը կառուցի նրա անցած ուղու ժամանակային առանցքի վրա, կարողանա գնահատել սունդուկյանական հերոսներին այսօրվա անհատի տեսանկյունից:

Ուսուցչի թեմայի ուսուցման խնդիրներն են. աշակերտը պետք է իմացություն ձեռք բերի հեղինակի կյանքի, նրա ապրած ժամանակի և գործերի վերաբերյալ, պետք է կարողանա տարբերակել գրական սեռերն ու ժանրերը, գրական ուղղություններն ու դպրոցները, կոնկրետ՝ դրամատիկական, սովորողը պետք է ինքնուրույն ուսումնասիրի գրական երկը, գնահատի այն, առանձնացնի ու վերլուծի կերպարները, գտնի գլխավոր հերոսին, բնութագրի նրան, պետք է հերոսի անձնական դրամայի և դրա գեղարվեստական արտացոլման ընկալում ցուցաբերի, երկի պատկերային համակարգը, լեզվաոճական առանձնահատկությունները ընկալելու, մեկնաբանելու կարողություն ցուցաբերի, ընկալի գրական երկում կիրառված բարբառը և կարողանա այն փոխարինել գրական արևելահայերենով, բարբառային բառերի բացատրություն կատարի՝ օգտվելով բառարաններից, օգտվել և օգտագործել ժամանակակից համակարգչային տեխնիկան ու համացանցը, գրական երկից սովորած բառերն ու արտահայտությունները գործածի իր խոսքի մեջ, կարողանա իր կարդացածը նորովի՝ ոճական տարբեր սկզբունքներով վերաշարադրել և համառոտել, երկում արծարծված խնդիրները արդիականացնել, կապ ստեղծել գրականության և արվեստի մյուս բնագավառների հետ՝ թատրոնի, կինոյի, երաժշտության, քանդակագործություն և այլն:

## Գաբրիել Սունդուկյանի կյանքը, ստեղծագործությունները

Սունդուկյանները բնիկ թիֆլիսեցի են եղել: Նրանց <<զանդուկսազ>> արհեստից էլ առաջացել է Սունդուկյան ազգանունը: Գաբրիելի հայրը՝ Մկրտումը, առևտրական էր, մահացել է, երբ որդին վեց տարեկան էր, որի խնամքով զբաղվել է մայրը՝ Թինաթինա Ռոտինյանը:

Սունդուկյանները Էջմիածնի վանքին պատկանող ճորտեր էին, հարկատու: Մայրը մեծ գումարով փրկում է ընտանիքը ճորտական կախումից: Զավակները ստանում են լիարժեք կրթություն նախնական կրթությունից հետո՝ որպես ճորտ, նա այլևս իրավունք չուներ ուսումը շարունակելու գիմնազիայում և ստանալու բարձրագույն կրթություն: 1831թ. մայրն ամեն ինչ անում է այդ ամոթալի խարանը ընտանիքի վրայից վերացնելու համար և միայն 1841թ. 300 հոլանդական ոսկու շնորհիվ նրանք ձեռք են բերում ազատություն: Միայն դրանից հետո Գաբրիելը ընդունվում է գիմնազիա և 1846թ-ից ուսումը շարունակում Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական բաժանմունքի արևելյան լեզուների բաժնում: Համալսարանը ավարտում է գերազանցությամբ և պաշտպանում թեկնածուական ատենախոսություն: Սունդուկյանն այնուհետև ունեցել է պետական ծառայողի կարգավիճակ: Նա այն եզակի գրողներից է, որն ապրել է ապահով կյանքով և հեռու է եղել կենցաղային-սոցիալական ծանր հոգսերից:

Սունդուկյանը թատերական նոր մտածողության կրողը եղավ, որը դիմելով դարձյալ ազգագրական-բանահյուսական-կենցաղային նյութին, ստեղծեց ազգային լիարժեք թատերագրություն՝ դրամա, որին վիճակված էր հարուստ կյանք՝ հայոց թատրոնի տարեգրության մեջ:

Սունդուկյանի գործերն են՝<<Էլի մեկ զոհ>>, <<Խաթաբալա>>, <<Քանդած օջախ>>, <<Պեպո>>, <<Գիշերվա սաբրը խեր է>> կատակերգական հիմքի դրամաները, ինչպես նաև՝ <<Վարինկի վեչերը>>, <<Բաղնիսի բողչան>>, <<Իմ մահն ու թաղումը>> գործերը:

Սունդուկյանը իր առաջին թատերախաղերը գրել է 40-ին մոտ տարիքում, այդ ժամանակ Թիֆլիսում մեծ աշխուժություն էր ապրում թատերական կյանքը: Սունդուկյանի անունը անխզելիորեն կապված է Չմշկյան-Ամրիկյան թատերական խմբի գործունեության հետ:

Ուսուցիչը նյութի մատուցման ժամանակ կարող է կիրառել հետազոտական աշխատանք, T-աձև աղյուսակ, դասախոսություն, զրույց, ստեղծագործական աշխատանք մեթոդները:

Դասի ընթացքում կիրառվում է Խիկ համակարգը:

Խթանման փուլում ուսուցիչը ներկայացնում է նախապես պատրաստած սկավառակի նյութը: Այնուհետև առաջարկում է տեսանյութը դիտելուց հետո աղյուսակի մեջ գրառումներ անել, թե ինչ տեսան, լսեցին ու ընթերցեցին:

Իմաստավորման փուլում ուսուցիչը դասախոսության մեթոդով ներկայացնում է գրողի կյանքը, ապրած ժամանակաշրջանը, ստեղծագործությունները:

Կշռադատման փուլում գրատախտակին նախապես գրված Թումանյանի խոսքերը բանալի դարձնելով՝ ուսուցիչը աշակերտներին նախապատրաստելու է հաջորդ նյութը ուսումնասիրելուն:

**Սունդուկյանի <<Իմ մահը և թաղումը>> կտակից**

<<Գերեզմանիս վրա վուչինչ արձան հարկավոր չէ, մե սիվ քարու իմ արժանի. Թե սրտով վրես արձան իք ուզում ու արժանի կու համարիք, էտ արձանը, իմ փոխանակ, Պեպոյի համար կանգնեցրեք, վուրդիոր կու սազ գա: Սաղ բոյով կանգնած ըլի բարձր պատվանդանի վրա՝ իր հաքուստով, գդակը ծածկած, մե ձեռին Արութինի բարաթը, մեկել ձեռով վրեն գրածն ըլի ցույց տալի նրան, վուր գլխաբաց ու սևերես կանգնած է կշտին:

Տակը՝ պատվանդանի վրա գրած ըլի մենակ էս խոսկիրը՝

<<Էս քու կոտրած ձեռով չի՞ս գրի՛ >>-Պեպո

**Հեթանոսական թատրոնը հին Հայաստանում: Հելլենիստական թատրոն**

Ուսումնական նյութը ուսուցանելու ընթացքում ուսուցիչը կարող է կիրառել հետազոտական աշխատանք, համագործակցային աշխատանք մեթոդները:

Խթանման փուլում ֆրոնտալ հարցման միջոցով պարզել, թե ով է Սունդուկյանը, ընթերցել լրացուցիչ տեղեկություններ:

Իմաստավորման փուլում ուսուցիչը դասարանը բաժանում է չորս խմբի և հանձնարարում ուսումնասիրել նախապես պատրաստած նյութերը (25 րոպե):

Առաջին խումբ- ուսումնասիրում է <<Հեթանոսական թատրոնը Հայաստանում>> նյութը:

Երկրորդ խումբ- ուսումնասիրում է <<Հելլենիստական թատրոնի ստեղծումը>>:

Երրորդ խումբ- ուսումնասիրում է <<Սունդուկյանը և Թիֆլիսի թատերական կյանքը>>:

Չորրորդ խումբ- ուսումնասիրում է <<Սունդուկյանի ստեղծագործությունները>> նյութը:

Կշռադատման փուլում խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները և կատարում եզրահանգումներ:

Մի կուռ ներդաշնակություն կա հելլենիստական դարաշրջանի Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթների միջև: Հայաստանը դարձավ գրականության ու թատրոնի երկիր: Պլուտարքոսը տեղեկացնում է, որ Տիգրանակերտում թատրոն կար, որտեղ բեմադրություններին մասնակցում էին Հունաստանից հրավիրված դերասաններ: Իսկ երբ Արտաշատում՝ Արտավազդ Բ-ի արքունիքում, բեմադրվում էր Եվրիպիդեսի <<Բաքոսուհիները>>, հանկարծ ներս են բերում հունապարթևական ճակատամարտում սպանված Կրասոսի գլուխը, և դերասան Յասոնն այդ պահին միանգամայն հարմար իր մենախոսությունն է արտասանում զորավարի կառափը ձեռքին… <<Մենք գալիս ենք սարերից և բերել ենք հարուստ որս>>, այսպես ավարտվեց Կրասոսի արևելյան արշավանքը, որը վերջացավ ողբերգությամբ:

Պլուտարքոսը հանգամանալից տեղեկություններ է հաղորդում Տիգրան Մեծի արքունիքում ծաղկած հելլենիստական պատմագրության և թատրոնի վերաբերյալ: Ասում է՝ Հայոց մեծ արքան Ք.ա. 69թ. թատրոնի շենք էր կառուցել, հույն դերասաններ էր հրավիրել, որոնք այստեղ պետք է բեմադրեին ոչ միայն դասական ողբերգություններ, այլև ժամանակակից կյանք արտացոլող, հենց տեղում ստեղծված թատերգություններ:

Պլուտարքոսը պատմում է Արտաշատում <<Բաքոսուհիների>> բեմադրության մասին, նաև այլ հունական թատերգությունների բեմադրությունների մասին, և որ թագավոր Արտավազդն ինքը <<գրում էր ողբերգություններ, ճառեր ու պատմություններ, որոնցից մի քանիսը պահպանվել են>>:

Միջնադարյան Հայաստանի համար հետազոտողները նշում են թատերական արվեստի հետևյալ տեսակները՝ ժողովրդական պարերգական դրամա, աշխարհիկ թատրոն, միմոս, խեղք, ճարտասանություն ու առասպելավարժություն՝ թատերականացված

բեմասացությամբ ծիսական արարողությունների, եկեղեցական հանդիսություններ, կենցաղային արարողություններ:

Հայ առաքելական եկեղեցին մերժեց թատրոնը: Թատրոնը համարվել է սատանայության մարմնավորում:

Մովսես Խորենացին <<Ողբ>>-ի մեջ, քննադատելով վիճակավորներին, ասում է, որ նրանք ատում են գիտությունն ու վարդապետական գրվածքները, բայց դրա փոխարեն սիրում են առևտուր ու կատակերգություններ: Հայ հոգևորականը քարոզում էր թատրոն չգնալ, որովհետև խեղկատակություն է, կործանարար է, աշխարհիկ անիմաստ զվարճանք է:

Քրիստոնեության վաղ շրջանում (4-5-րդ դարեր), ըստ Խորենացու, ցուցադրվել են թատերգություններ, հետագա շրջաններում մենք թատրոն չենք ունեցել: Քրիստոնեական շրջանի հայ թատրոնն սկսվում է հայ կաթոլիկներից: Ըստ վկայությունների՝ Լվովի հայ կաթոլիկների դպրոցում 1668թ. գրվել և բեմադրվել են <<Մահ Կեսարու>>, <<Առակք Սողոմոնի>>, <<Սրբուհի կոյս Հռիփսիմէ>> կրոնաբարոյախոսական թատերգությունները:

Եվրոպական դասականապաշտների հետևությամբ հայ Մխիթարյանները գրեցին պատմական ողբերգություններ, որոնցից Արսեն Բագրատունու <<Երվանդը>>, <<Արտաշես>>-ը: Հայտնի են Պեշիկթաշյանի և Դուրյանի թատերգությունները: Արևմտահայ իրականության մեջ հետո արդեն գալիս են Պարոնյանը, Շանթը, Օշականը և թատրոնն արժանիորեն հաստատում իր տեղը հայ կյանքում:

## Հելլենիզմ: Հելլենիզմն Հայաստանում

Հելլենիզմը առաջացել է մ.թ.ա. 4-1-ին դդ.-ում: Հիմնական գաղափարը հունական մշակույթը, տնտեսությունը և քաղաքականությունը տարածելն էր: Ստեղծվել է անտիկ շրջանում՝ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո, երբ հունական մշակույթն ու լեզուն գերակայում էին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում և շարունակվել մինչև Հռոմեական կայսրության անկումը՝ հինգերորդ դար: Առաջին անգամ <<հելլենիզմ>> բառը օգտագործել է գերմանացի պատմաբան Յոհան Դրոյզենը՝ դրա տակ հասկանալով հունական պետականության և կրթվածության տարածումը

արևելյան ժողովուրդների մեջ՝ անտեսելով հելլենիզմի հասարակական և տնտեսական էությունը:

Հելլենիստական մշակույթից ցավոք մեզ է հասել միայն Գառնիի հելլենիստական տաճարը, և որոշ մասեր են գտնվել Արտաշատում և Վաղարշապատում: Մնացածը ոչնչացվել են քրիստոնյաների կողմից:

Գառնիի բաղնիքի հատակին հայտնաբերված խճանկարը կատարված է հունա-հելլենիստական բովանդակությամբ ու արվեստով: Հելլենիստական արվեստի նշանավոր ստեղծագործություններ են Արտաշեսյան հարստության թագավորների՝ Տիգրան Բ-ի, Արտավազդ Բ-ի և նրանց հաջորդների կտրած արծաթե և պղնձե դրամները:

Հին Հայաստանի մշակույթը կապվեց հին աշխարհի երկրների մշակույթների հետ, յուրացրեց նրանց նվաճումները: Հայ ժողովուրդը կերտեց հելլենիստական կամ անտիկ բնույթի իր սեփական, ինքնատիպ, բարձր զարգացած մշակույթը և կանգնեց հին աշխարհի առաջավոր ժողովուրդների շարքում:

## Գաբրիել Սունդուկյանը և թատրոնը

Արևելահայ մասնագիտական թատրոնը հիմնադրվել է 1863թ.-ին Թիֆլիսում: Արևելահայ թատրոնը ևս սկսվեց դասականապաշտությունից: Դա նախ Հ. Ալամդարյանի <<Հռադանիստ և Զենոբիա>> պատմական ողբերգությունն է և ապա Խ. Աբովյանի <<Ֆեոդորա կամ որդիական սեր>> թափառող դիպաշարով գրված դրաման: 19-րդ դարում հայկական թատերախմբեր են գործել Թիֆլիսում, Մոսկվայում, Թեոդոսիայում:

Հետո արդեն պատմական ողբերգություններ է գրել Գ. Պատկանյանը (<<Վարդան>>): Իսկ Գ. Սունդուկյանը պիտի գար <<բեմերից քշեր>> բոլոր մեռած հերոսներին և հաստատեր իր թատրոնը: Գ.Սունդուկյանը առաջին հայ թատերագիրն է, որի ստեղծագործությունները ուսումնասիրում են դպրոցում:

## Թատերական երկերի ուսումնասիրումը

Նյութի ուսումնասիրության համար կարելի է կիրառել հետազոտության համար նախատեսված թերթեր, պաստառներ: Ուսուցիչը կարող է կիրառել հետևյալ մեթոդները՝ մտածիր-զուգորդիր-մտքեր փոխանակիր, պատկերասրահ, Վենի դիագրամ: Խթանման փուլում տանը սովորած նյութերի հիման վրա խմբերին հանձնարարվում է ստեղծել պաստառներ: (20 րոպե)

Իմաստավորման փուլում մեկնաբանվում են պաստառները, պատկերսրահի մեթոդի օգնությամբ հասանելի դառնում բոլոր աշակերտներին: (10 րոպե)

Վերաբաժանումից հետո խմբերին բաժանվում է թատերական երկի և նրա ժանրային առանձնահատկությունների մասին նյութը և հանձնարարվում ուսումնասիրել, ապա Վենի դիագրամով ցույց տալ վիպական արձակի և դրամատիկական երկերի նմանությունները ու տարբերությունները:

Կշռադատման փուլում աշակերտները ներկայացնում են նյութը ընկալման-դասակարգման-յուրացման շղթայով:

Գրական-գեղարվեստական երկերը դասակարգվում են ըստ սեռերի՝ **քնարական, պատմողական և թատերգական**: Ինքնուրույն լինելով հանդերձ՝ այս սեռերը կարող են հանդես գալ նաև փոխադարձ ներթափանցումներով:

**Քնարական սեռի գործերի հիմքը պատկեր- ապրումն է, պատմողական սեռինը՝ պատկեր-գործողությունը, թատերգական սեռինը՝ պատկեր-ներկայացումը:**

Թատերգության հիմնական տեսակներն են՝ **ողբերգություն, կատակերգություն, դրամա:**

**Ողբերգությունը** ներկայացնում է կյանքի որևէ ճակատագրական իրադարձություն, ավարտվում է արժանավոր հերոսի կործանումով՝ հանդիսատեսի մեջ առաջացնելով վիշտ, ցավ և կարեկցություն: Ողբերգությունները հանդիսատեսին մղում են հոգեկան մաքրագործման: Ողբերգություններ գրել են Ք.ծ.ա 5-րդ դարի հույն հեղինակներ Էսքիլեսը, Սոֆոկլեսը, Եվրիպիդեսը:

**Կատակերգության** գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ներկայացնում է կյանքի արատները՝ բացահայտելով դրանց ծիծաղելի էությունը, ծաղրում է հանրային կյանքում, մարդկանց կենցաղում, բնավորության և հոգեբանության մեջ եղած բացասական գծերը: Կատակերգությունն առաջացնում է ծիծաղ, ծաղր, ծաղրուծանակ: Հին հունական թատրոնում հայտնի են Արիստոֆանեսի կատակերգությունները:

**Դրաման** կյանքը ցուցադրում է բնական ընթացքով և բազմակողմանիորեն՝ իր մեջ ներառելով և՛ ողբերգական, և՛ կատակերգական դրություններ: Դրաման՝ որպես առանձին տեսակ, առաջացել է ուշ՝ 18-րդ դարում:

Թատերական երկերը թեև լինում են գլխավորապես ոչ չափածո, բայց տարբերվում են վիպական արձակից, ուստի ունեն իրենց ուսումնասիրման առանձնահատկությունները: Վիպերգական գրվածքում գրողը հերոսների ու դեպքերի մասին պատմում է, դրանց պատմությունն անում: Մինչդեռ թատերական երկի հիմնական առանձնահատկությամբ պայմանավորվում են նրա մյուս տարբերությունները վիպական արձակից: Վիպեգական գրվածքում, լինի դա վեպ, վիպակ կամ պատմվածք, որևէ դեպք, որի մասին գրողը պատմում է որպես ներկա ժամանակում կատարվող անցք : Այնուհետև վիպական գրվածքում գլխավորը հեղինակի խոսքն է՝ պատմողությունը: Թատերական երկում տեղ է գտնում գործող անձանց խոսքը՝ նրանց տրամախոսությամբ: Թատերական երկի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն գործող անձանց մենախոսություններն ու երկխոսությունները: Թատերական երկը, որը գրվում է բեմականացման համար ,ունի կուռ, ամբողջական հորինվածք: Նա բաժանվում է արարվածների, պատկերների ու տեսիլների, որոնք սերտորեն կապվելով իրար՝ շարունակում, լրացնում ու ամբողջացում են միմյանց: Ներկայացման ժամանակ թատերական երկի բնագրին միահյուսվում են նրա բեմական ձևավորումը, դերասանական խաղն ու երաժշտությունը: Դա ավելի է ուժեղացնում թատերական երկի ներգործող ուժը, տպավորիչ և արտահայտիչ դարձնում նրա հերոսների տրամախոսություններն ու գործողությունները: Այդ պատճառով էլ թատերական երկի ուսումնասիրման ընթացքում մեծ կարևորություն ունի նրա ներկայացման դիտումը:

Հայ գրողներից ողբերգություններ գրել են Արսեն Բագրատունին, Մկրտիչ Պեշիկթաշյանը, Պետրոս Դուրյանը, Նարիր Զարյանը, կատակերգություններ՝ Հակոբ Պարոնյանը, դրամաներ գրել են Շիրվանզադեն, Լևոն Շանթը և ուրիշներ:

Համաշխարհային թատերգության մեջ հայտնի են Վիլյամ Շեքսպիրի, Շիլլերի, Բայրոնի, Արթուր Ադամովի, Վիլյամ Սարոյանի անունները:

**<<Պեպո>> կատակերգությունը: <<Պեպո>>-յի կերպարները:**

**<<Պեպո>>-յի բարոյական դասերը:**

Նյութի մատուցումը կատարվում է սկավառակի դիտում, դասախոսություն մեթոդների միջոցով:

Ուսուցիչը խթանման միջոցով ներկայացնում է գրողի գլուխգործոցը՝ <<Պեպո>>-ն: Նշում է երկի գրության պատմությունը: Առանձնացնում է, որ գործի հիման վրա նկարահանվել է Հայկինոյի առաջին ձայնային ֆիլմը:

Իմաստավորման փուլում աշակերտները դիտում են ֆիլմը:

Կշռադատման փուլում աշակերտները խոսում են իրենց տպավորությունների մասին:Պիեսը հանձնարարվում է ընթերցել,կատարել գրառումներ:

<<Պեպո>>-յի կերպարների բարոյական դասերի ուսուցման ժամանակ ուսուցիչը ֆրոնտալ հարցումների շնորհիվ պարզում է, թե պիեսը քանի մասից է բաղկացած, ինչպես են կոչվում մասերը, ովքեր են հերոսները: Ապա լավագույն աշակերտների օգնությամբ դերերով ընթերցվում են դասագրքում զետեղված արարվածի կարևոր հատվածները: Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է բնագրից կարդալ Պեպոյի մենախոսությունները:

Հաջորդ փուլում աշակերտները կարուսելի մեթոդի օգնությամբ մեկը մյուսին են փոխանցում թերթիկը ,որի մեջ յուրաքանչյուրը գրի է առնում Պեպոյի բարոյական գծերը:

Կշռադատման փուլում ընթերցվում են աշակերտների կարծիքները և գրանցվում T–աձև աղյուսակի մեջ (աղյուսակի առաջին մասում գրվում են Պեպոյի կերպարին բնորոշ գծերը, երկրորդ մասում՝ <<Որտեղի՞ց են դրանք երևում>> հարցի պատասխանները): Վերջում կատարվում է բառարանային աշխատանք, ուսուցիչը բաժանում է թերթիկներ, որտեղ աշակերտները պետք է լրացնեն բարբառային բառերին համարժեք գրական հայերեն բառերը:

Սունդուկյանի <<Պեպո>>-ն բնույթով դրամա է, թեև հեղինակն այն բնորոշել է որպես կատակ (կատակերգություն):

Սունդուկյանը <<Պեպո>>-յի նյութը վերցրել է 1860-ական թթ.-ի թիֆլիսահայ կյանքից, երբ սրվում է պայքարը քաղաքային բուրժուազիայի ու աշխատավորության միջև:

Տալով այդ կյանքի իրական պատկերը՝ նա անողոքաբար մերկացնում է կեղեքիչներին՝ առևտրականներին ու վաշխառուներին և, դրան հակառակ, իր խոր համակրանքն է արտահայտում աշխատավոր մարդկանց նկատմամբ, բաժանում նրանց ուրախությունն ու տխրությունը: Սունդուկյանը <<Պեպո>>-ում ցույց է տալիս թիֆլիսահայ կյանքի՝ գլխավորապես ծիծաղելի, կոմիկական կողմերը: Սակայն նա բացահայտում է նույն կյանքի տխրալի, ողբերգական կողմերը:

Հայոց թատրոնի տարեգրության մեջ ժամանակագրական նոր թվական էր 1871թ.-ի ապրիլի 30-ը: Այդ օրը Թիֆլիսի հայոց թատրոնն առաջին անգամ ներկայացնում է <<Պեպո>>-ն՝ գլխավոր դերակատար ունենալով Գևորգ Չմշկյանին, այն նույն դերասանին, որի <<Հիշատակարան>>-ի տվյալներով Գ. Սունդուկյանը նրան է թելադրել <<Պեպո>>-յի ձեռագիրը: Այս երկի արտակարգ հաջողության պատճառն այն է, որ լինելով հեղինակի տաղանդի հասուն պտուղը՝ տոգորված Է գաղափարական խոր բովանդակությամբ և ունի գեղարվեստական բարձր հնչեղություն: Այստեղ բազմակողմանի արտացոլում են գտել դարաշրջանի կյանքը, սոցիալական տարբեր խավերի կեցությունն ու բարոյական ըմբռնումները: Սունդուկյանն իր առաջաբանում <<Պեպո>>-յի շարժառիթի, նյութի, գաղափարի մասին խոսում է շատ պատկերավոր:

Պիեսում հեղինակը լայն տեղ է տվել իր հերոսների կենսապայմանների պատկերմանը: Պիեսի մուտքը նախերգանք-ֆոն է հետագա գործողությունների համար: Հենց սկզբից հեղինակը ներկայացնում է Պեպոյի տունն ու ընտանիքը: Տունն աշխատավոր մարդու խղճուկ բնակարան է՝ <<հին ձևի աղքատիկ սենյակ՝ թարեքներով, դոլաբներով…>>:

Առաջին արարվածում հանդես են գալիս աշխատավոր խավից ընտրված բոլոր հերոսները՝ նախ Շուշանը, Կեկելն ու Գիքոն, ապա Պեպոն ու Կակուլին: Շուշանը մերթ անհանգստանում է ձկնորսության գնացած որդու՝ Պեպոյի համար, մերթ էլ հուզվում է դժբախտացած աղջկա՝ Կեկելի համար, անիծում անխիղճ վաճառականին՝ Արութին Զիմզիմովին, ասելով. <<Էսենց էլ ապրիլ կուլի… Հախմիրան տերը անե քու դատաստանը, Արութին>>:

Կատակերգության համանուն հերոսը Պեպոն, Աբովյանի Աղասուց հետո ժողովրդական խառնվածք ունեցող ամենահաջողված կերպարն է՝ քանդակված ռեալիստական գրչով: Եթե առաջինը՝ Աղասին ,թուր էր բարձրացրել հանուն ժողովրդի ազգային ազատագրության համար, ճնշված ու հարստահարված աշխատավորների շահերի

պաշտպանության համար, ապա Պեպոյի կերպարում խտացված են աշխատավոր մարդուն հատուկ բնավորության ու հոգեբանության հիմնական գծերը՝ աշխատասիրություն, ազնվություն, պատվասիրություն, շիտակություն, իր և իր խավի մարդկանց շահերն ակտիվորեն պաշտպանելու բարձր գիտակցականություն:

Նրա արտաքին նկարագիրն է. <<35 տարեկան, թուխ ու գեղեցիկ դեմքով, բարձր հասակով, ամուր կազմվածքով և լայն կրծքով… Քայլը՝ հաստատ, ձայնը՝ քաղցր և ազդու, շարժվածքն ու խոսակցության ձևերը՝ բուն ժողովրդական>>: Պեպոն աշխատավոր մարդ է, ով, հալալ ու արդար աշխատանքի մեջ է տեսնում իր կյանքի իմաստը: Նա շատ աշխատասեր է: Նա գիշեր-ցերեկ չարչարվում է, <<անձրևի ու քամու հիդ>> կռիվ տալի, որպեսզի <<մե թիքա հաց ճարե>> և դրանով պահի իր մորն ու քրոջը: Նա անչափ շատ է սիրում քրոջը, մտահոգված է նրա բախտավորությամբ: Որպես արդարամիտ ու պատվասեր մարդ, որպես եղբայր՝ Պեպոն խորապես վերապրում է իր քրոջ ծանր վիճակը, ամեն կերպ աշխատում հանգստացնել ու սիրտ տալ նրան: Հուզիչ է այն տեսարանը, երբ նա եղբայրաբար փաթաթվելով քրոջը՝ պատրաստակամություն է հայտնում փրկել նրա պատիվը, ինչ գնով ուզում է լինի. <<Թե Արութինը չի տա, դիփ մետի կու ծախծխիմ, կեհամ ախկտութին կոնիմ, գլուխս գրավ կու դնիմ ու քիզ էտենց չիմ թողնի>>:

Պեպոն իր դատը վարում է խղճի, վեհանձնության, բարության, մարդկայնության, ազնվության, աստվածասիրության դիրքերից: Նա իր միջավայրի հարազատ ծնունդն է, իր խավի հոգեբանության կրողը, ուստի և նրան անհասկանալի են ուրացումը, անխղճությունը, ազնվությունը, հակամարդկային արարքները:

Եկել է Զիմզիմովի տուն՝ իր հասանելիքի ետևից, սակայն արժանանում է վերջինիս արհամարհանքին ու ծաղրին: Զարմացած ու ապշած Պեպոն բարձրացնում է աշխատավորի հոգու ձայնը:

Պեպոյի համար ամենթանկ արժեքը պատվախնդրության հարցն է:

Պատվախնդրության պատճառով էլ Պեպոյի հոգեկան աշխարհի շիկացումը հասնում է իր բարձրակետին, որի սքանչելի մեկնաբանությունն է Հովհաննես Թումանյանի խոսքը. <<Ու անվերջ էն մեծ Պեպոն, կյանքի բեմի վրա մաքուր, հաղթական՝ Զիմզիմովի դեմը կանգնած իր հալալ աշխատանքի կոշտ ձեռքը կզարկի մուրհակին ու Թիֆլիսի

բարբառով կորոտա-քու սրտումն ի՞նչ է գրած… Ու կվարի իր ազնիվ կռիվը, ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար>>:

Պեպոն հայ գրականության մեջ աշխատանքի՝ կեցության հիմքերի, փիլիսոփա-բարոյախոսն ու բանաստեղծն է, նրա ամեն մի շարժումից ու խոսքից, նրա բառ ու բանից բուրում է աշխատանքի մարդու հոգու ազնվությունը և գեղեցկությունը: Դրա ցայտուն նշաններն են հատկապես մենախոսությունները. Մենախոսությունը թեև ողողված է դառնագին ապռումներով, հոգեկան աղաղակներով, սակայն ոչ թե պարտված մարդու ապրումներ է, այլ հաղթական շիթեր: Ի դեպ, Պեպոյի կերպարը հիանալի է բացահայտված կինոժապավենի Պեպոյի երգի մեջ, որի տեքստը գրել է Եղիշե Չարենցը՝ Դ. Մալյանի խորհուրդներով, իսկ երաժշտությունը հյուսել է Արամ Խաչատրյանը:

**Ինչպես է ծնվել <<Պեպոյի երգը>>**

*Դամբը ձեռիս աշխատում իմ,*
*Հալալ աշխատանքս իմ ուտում,*
*Վա՜յ էն մարդին, որ աշխարհում*
*Խալխի դատած հացն է ուտում:*
*Հալալ մարդու սիրտը ուրախ,*
*Ճակատը միշտ բաց է ըլում,*
*Վա՜յ էն մարդին, որ համ գըլում,*
*Համ էլ անկուշտ լաց է ըլում:*

*Դամբը ձեռիս ջուրն իմ մտնում,*
*Ձեռքս ու ոտս թաց է ըլում,*
*Հալալ արյուն-քրտինք թափում,*
*Քիրս ու դեղիս լաց ին ըլում:*
*Լուսնյակը՝ լուս, գիշեր՝ խավար,*
*Առավոտը բաց է ըլում,*
*Խըլբըլթալեն լոթի ձկներ*
*Բազարումը հաց ին ըլում:*

1934թ. Համո Բեկնազարյանը էկրան բարձրացրեց հայերեն առաջին հնչյուն կինոնկարը՝ <<Պեպոն>>, որի առիթով հանդիպեցին պոեզիայի և երաժշտության երկու նշանավոր դեմքերը՝ Եղիշե Չարենցն ու Արամ Խաչատրյանը: Այստեղից էլ սկսվեց բանաստեղծի և կոմպոզիտորի կարճատև ստեղծագործական համագործակցությունը: Չարենցը մեծ դեր խաղաց կինոնկարի սցենարի ստեղծման և մշակման գործում: Սցենարի առաջին տարբերակում Պեպոն երգի տեքստ չի ունեցել, սակայն կերպարն ամբողջացնելու, սոցիալական պատկերն ավելի հստակ ներկայացնելու համար Համո Բեկնազարյանն առաջարկում է երգ գրել:

Արվեստագիտության դոկտոր Սարգիս Մելիքսեթյանը, որն այդ տարիներին ղեկավարում էր Հայկինոյի սցենարական բաժինը, վկայում է, որ ռեժիսորի և

կոմպոզիտորի ցանկությամբ Պեպոյի երգի տեքստը գրել առաջարկվում է Եղիշե Չարենցին: <<Բանաստեղծը սիրով համաձայնվեց: Երբ ստացանք տեքստը, այն հանձնարարեցինք նկարահանվող խմբին>>: Իսկ մինչև այդ Արամ Խաչատրյանն արդեն սկսել էր գրել կինոնկարի երաժշտությունը: Վերջինս գրում է. <<Համո Բեկնազարյանը առաջարկեց գրել <<Պեպոյի երգի>> երաժշտությունը, ես նախապես չունեի երգի տեքստը: Ասաց, որ տեքստը գրում է բանաստեղծ Ե. Չարենցը: Ես լսել էր Չարենցի մասին և ծանոթ էի նրան, ուստի և առանց տարակուսանքի սկսեցի գրել երաժշտությունը>>:

Չարենցի ստեղծած տեքստն իր ոճով ձուլվեց կոմպոզիտորի երաժշտությանը: Ստացվեց խոսքի և հնչյունների գեղեցիկ ներդաշնակությանը:

## Եզրակացություն

Գ. Սունդուկյանը նվիրագործում է բարոյական արժեքներ, որոնք նրա ստեղծագործության մի ծայրից մյուսն անցնող <<էթիկական ուսմունքի>> կետերն են: Սունդուկյանական էթիկան հենվում է ոչ թե կրոնական-ավետարանական <<սիրո և գթասրտության>>, <<խղճի և մերձավորության>> դրույթների վրա, այլ, նախ և առաջ, դարից դար փոխանցված ժողովրդական-բարոյախոսության, սիրո, խղճի, կարեկցության, ընկերության ժողովրդական պատկերացումների վրա:

Սովորողները թեմայի ավարտին կկարողանան գնահատել Սունդուկյանի ստեղծագործությունը, պատկերացում կկազմեն գրողի կյանքի, ստեղծագործությունների ժամանակաշրջանի մասին: Կսիրեն գրողի ստեղծագործությունները, բանավոր և գրավոր կկարողանան արտահայտել իրենց մտքերը, կվիճաբանեն հիմնահարցերի շուրջը, վեր կհանեն Սունդուկյանի ստեղծագործությունների արդիականությունը, կձևավորեն իրենց արժեհամակարգը:

Եթե ուսուցիչը կարողանում է սովորողի հոգում կրակ բորբոքել, կրակ մեր մեծերի և նրանց ստեղծագործության հանդեպ, եթե ընթերցանությունը դառնում է ոչ թե պարտադրանք, այլ հոգու կանչ, ուրեմն գրականության դասը հաջողված է:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Ս. Աղաբաբյան, <<Գաբրիել Սունդուկյան, , Ե., 1948:
2. Ա.Մ Բաբայան, Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը, Ե., 1988:
3. Գր. Սարգսյան <<Հայ մեծ դրամատուրգը, , Ե., 1976:
4. Բ. Ուլուբաբյան , Զրուցարան, , Ե., 19……